ԱՐՏԱՇԱՏԻ VII ԲԼՐԻ 1973—1975 ԹԹ. ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արտաշատի հնագիտական արշավախմբի (պետ ակադ. Բ. Առաքելյան) մի ջոկատը, 1973 թ. սկսեց Արտաշատի VII բլրի պեղումները, պարզելու՝ իր բարձրությամբ երկրորդ բլրի դերն ու նշանակությունը։ Մյուս բլուրների նման, VII բլուրը նույնպես շրջապատված է հզոր պարիսպներով և մտնում է պաշտպանական ընդհանուր համակարգի մեջ։ Իր դիրքով ու պաշտպանական կառուցվածքներով այն ամենալավ ամրացված ու անմատչելի բլուրներից մեկն է (սխեմա № 1)։ Պարսպապատերը, որոնց հիմքերն են միայն տեղ-տեղ պահպանվել, կառուցված են տեղական մոխրագույն մարմարից և կարմրավուն կարծր քարերից։ Խոշոր, գրեթե քառակուսի, կոպիտ մշակված քարերը շարված են երկու երեսից, իսկ մեջը-լցված է խիպար, խճաքար և ցեխ (լայնությունը՝ 280—350 սմ)։

Մի շարք հատվածներում (հատկապես հյուսիսային) ժայռերը կտրված և հարմարեցված են պարսպապատի շարվածքին (նկ. 2)։ Պարիսպները տեղանքին համապատասխան դուրս ու ներս թեքելու եղանակով, ստեղծվել են պաշտպանական առանձին հատվածներ, որով և հարվածի տակ է առնվել շրջակայքը։ Առավել խոցելի հատվածները, հատկապես ցածրադիր և բլուրների միացման տեղերը, ամրացված են շրջանաձև, 8—9 մ տրամագծեր ունեցող աշտարակներով՝ թշնամուն թևերից հարվածելու համար։

Բլրի հարավային լանջին, որտեղ թեքությունը համեմատաբար քիչ է, ուստի և ավելի խոցելի, նկատելի են զուգահեռ պատեր։ Դրանց հեռավորությունը միմյանցից որոշ հատվածներում 50 սմ է։ Այստեղ մենք ունենք տարբեր ժամանակաշրջանների շինություններ։ Քաղաքի հիմնադրման ժամանակ կառուցված պարիսպն ավելի բարձր է դրված եղել։ Բայց հետագայում, հավանաբար մ. թ. I դ., այս հատվածում, ամրոցի տարածքը մեծացնելու և պաշտպանությունն է՛լ ավելի ամրապնդելու նպատակով կառուցվել է երկրորդ պարիսպը։ Այսպիսով, թշնամու համար հարմար մատչելի տեղանքը վերցվել է պարսպապատի մեջ, ուստի՝ առաջին դիծը դրավվելուց հետո, կարելի էր ապաստանել երկրորդ պարսպի ներսում։ Ամրոցի մուտքը, ըստ երևույթին, եղել է հարավ-արևելյան կողմից, որտեղից թեք լանջով ճանապարհը բարձրացել և անցել է պարսպի տակով։ Բլրի այդ հատվածը պայթեցված լինելու պատճառով դժվար է այն ներկայացնել։ Բլրի արևմտյան հատվածի վերին մասում շրջանաձև երկու աշտարակներով պաշտպանվել է դեպի VIII բլուրը տանող մուտքը։ Ըստ որում, VII և VIII բլուրների միջև եղել է նաև դեպի քաղաք տանող մուտք, որտեղից մտնելով կարելի էր բարձրանալ VII և VIII բլուրները։ Արևելյան մասում ամրոցը մուտքով հաղորդակցվել է այդ լանջի ընդարձակ բնակավայրի հետ, որն իր մեջ ամփոփելով նաև V բլու-

բը, կազմել է հզոր պարսպապատով անջատված մի առանձին պաշտպանական հատված, ամրոց։ Բլրի մակերեսը, մեծ թեքության պատճառով, խիստ հողմնահարվել է և լվացվել, որի հետևանքով ժայռերը մեծ մասամբ մերկացել են, իսկ մշակութային շերտը խոր չէ (միայն որոշ տեղերում հասնում է 1—1,5 մ)։ Պեղումներով բացված է մոտ 1000 քմ տարածություն։ Այս բլուրը, ի տարբերություն մյուսների, հարթ տարածություն գրեթե չունի և բավական

Նկ. 1

սրագագաթ է։ Այստեղ I և VIII բլուրների նման չկան ուղիղ փողոցների շուրջը դասավորված թաղամասեր, այլ ժայռերը հարթեցված են, կտրված և հարմարեցված բնակարանների համար, որոնք դասավորված են եղել տերրասաձև։ Մի շարք հատվածներում հենապատերի միջոցով շենքերի համար ստեղծվել են հարթակներ։

Բլրի կենտրոնական հատվածում բացված բնակարանների պատերը վերաբերում են երկու շինարարական շրջանի[1] (նկ. 1)։ Առաջին շրջանը կապ-

[1] VIII բլրի շերտագրության համաձայն, որը, ըստ երևույթին, կարելի է տարածել ամբողջ քաղաքի վրա, I շինարարական շրջանը թվագրվում է մ. թ. ա. II—մ. թ. I դդ. կեսերով (59 թ.), սակայն I բլրում այդ ժամանակահատվածն ունի երկու շինարարական շերտ, որոնցից առաջինն ընդգրկում է քաղաքի հիմնադրման օրից՝ մ. թ. ա. II դ. առաջին քառորդից մինչև մ. թ. ա. I դ. 60-ական թվականները։ Շատ հնարավոր է, որ I բլուրն ավերվել է մ. թ. ա. 56 թ.՝ Հրահատ III-ի և Տիգրան Կրտսերի հարձակման ժամանակ, երբ պարթևական զորքերը պաշարել էին Արտաշատը։ Ըստ երևույթին, ավերածությունը փոքրածավալ է եղել և ավերվել են միայն I բլուրը կամ քաղաքի որոշ թաղամասերը, ուստի, աղբյուրներն այդ սասին լռում են։ I բլրի II շինարարական շրջանն ընդգրկում է մ. թ. ա. I դ. 60-ական թվականներից մինչև մ. թ. 59 թվականը (Dio, XXXVI, 50, 1, 51 $_{1-2}$, 52 $_{2-3}$, «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, Երևան, 1971, էջ 595, Հ. Մանանդյան, երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 375, Б. Н. Аракелян, Основные результаты раскопок древнего Арташата в 1970—1973 годах («Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 4, стр. 44—59); Ժ. Դ. Խաչատրյան, Ա. Գ. Կանեցյան, Արտաշատի VIII բլրի շերտագրությունը (ՀՍՍՀ ԳԱՀ «Լրաբեր», 1974, № 9, էջ 91)։

ված է քաղաքի հիմնադրման հետ և հնագիտական նյութերով թվագրվում է մ. թ. ա. II—I դդ.։ Այդ շրջանի պատերն ավելի լայն (1—1,2 մ) և համեմատաբար խոշոր քարերով են։ Պահպանված պատերը վկայում են, որ շինությունները կառուցվել են միասնական պլանով։ Բնակելի սենյակները հարում են պարիսպներին։ Դրանք մեծ համալիրներ են, ուղղանկյուն սենյակներով, որոնք իրար հետ կապված են նեղ միջանցքներով։ Այդ հատվածներում, զինվորների շարժումը դեպի պարիսպները հեշտացնելու համար, թողնված են անցումներ։ Սենյակների հատակները պատած են սալերով (նկ. 3) կամ հարթեցված են կավով։



Նկ. 2

Երկրորդ շինարարական շրջանը թվագրվում է մ. թ. I—II դդ.։ Այդ շրջանի պատերի հիմքերը բավական բարձր են և շատ տեղերում հարում են հին պատերին։ Սակայն, ի տարբերություն I և VIII բլուրների, այստեղ երկու շինարարական շրջանները միմյանցից մոխրաշերտերով անջատված չեն։ Հավանաբար VII բլուրը նույնպես մ. թ. ա. I դ. առաջին կեսին և մ. թ. 58 թ. որոշ ավերածությունների է ենթարկվել, բայց հրդեհի չի մատնվել։ Պարզապես ավերված շինությունների տեղում հետագայում կառուցվել են նորերը։ Երկրորդ շինարարական շրջանի պատերն ավելի նեղ են (40—30 սմ) և միշտ չէ, որ շարելիս օգտագործվել են քարեր։

Շենքերի մեծ մասն ունեցել է հողե հարթ ծածկ, իսկ մյուս մասը, ինչպես կղմինդրի՝ սոլենի (տախտ. I 11) և կալիպտերի առանձին բեկորներն են ցույց տալիս, ծածկված են եղել կղմինդրով։ Սակայն մ. թ. ա. II դ. դեռևս ծածկի այդ տեսակն ունեցել է սահմանափակ կիրառություն։ Ըստ երևույթին, սկզբնական շրջանում կղմինդրով ծածկվել են միայն հասարակական և վերնախավին պատկանող շենքերը։ Կղմինդրե ծածկերը տարածում են ստանում սկսած մ. թ. ա. I դ.։ VII բլրի կալիպտերի բեկորը բազմանկյուն

է, հայտնաբերվել է II շինարարական շրջանի շերտից։ Այդպիսի կալիպտերներ հայտնաբերվել են VIII բլրի մ. թ. I—II դդ. շերտերից և Խոր Վիրապի բլուրներից մոտ 300 մ արևելք՝ դաշտում, հետախուզական աշխատանքների ժամանակ։

Այս շրջանին պատկանող սենյակներից երկուսի հատակի տակ հայտնաբերվեցին կարասային և հիմնահողային թաղումներ։ Նույնանման թաղումներ հայտնաբերվել են նաև Արտաշատի I և VIII բլուրների պարիսպների երկայնքով՝ ներսի կողմից ու սենյակների հատակների տակ։ Դրանք պատկանում են մ. թ. ա. II—մ. թ. III դդ.։ VII բլրի մանկական թաղումները թվագրվում են մ. թ. I—II դդ.։ Արտաշատի և անտիկ շրջանի մյուս հուշարձանների պեղումները վկայում են, որ Հայաստանում եղել է հանգուցյալներին (հատկապես երեխաներին), պարիսպների կողքին, սենյակների հատակների տակ թաղելու սովորույթ։ Տեղական այդ սովորույթը գալիս է դեռևս V—IV հազարամյակից։ Հենց Արտաշատում, VIII բլրի վրա, IV հազարամյակի բնակարանի հատակի տակ բացվեցին մանկական թաղումներ։

Կենտրոնական հատվածի սենյակներից մեկում (7, B քառակուսի) բացվեց մի թոնիր (պահպանված մասի բարձրությունը 60—70 սմ, տրամագիծը ներքևի մասում՝ 70 սմ), որի 15 սմ հաստությամբ մոխրաշերտի մեջ կային կենդանու փոքր ոսկորներ (նկ. 4)։ Թոնիրն իր չափերով ու կառուցվածքով նման է I և VIII բլուրների վառարաններին[2]։

VII բլրի թոնիր-վառարանը կառուցված է կավի բարակ շերտի վրա շաղախի օգնությամբ ամրացված կիսակարասի մեծ բեկորներով, որոնց վրա դրսի կողմից շարված են քարեր։ Թոնրի հատակը և պատերը ներսից հարթեցված են։ Թոնիրներ պատրաստելու այս եղանակը Հայաստանում հանդիպում է հելլենիստական շրջանում։ Ճիշտ նույն կառուցվածքն ունեն VIII բլրի վրա բացված 13 d քառակուսու (պահպանված մասի տրամագիծը՝ 80 սմ), 12 d քառակուսու (տրամագիծը՝ 50 սմ, բարձրությունը՝ 63 սմ) պատի անկյունում գտնվող թոնիրներ։ Վերջինս ավերվելուց հետո վրան քիչ շեղումով (10 սմ) պատրաստել են երկրորդը։ Հետաքրքիր է, որ վերջինս շինելիս բարակ պատերով (հաստությունը՝ 1 սմ) կարասի վերին կեսի վրա կավե շաղախով ամրացրել են ավելի մեծ կարասի հաստ բեկորներ։ VIII բլրի 21 F քառակուսում պատի տակ բացված թոնիրը պատրաստված է կավի շաղախի երկու երեսին փակցված կարասի բեկորներից։ 14 d քառակուսու թոնիրը[3], որը հատուկ պատրաստված էր կիսակարասի ձևով (պսակի տրամագիծը՝ 30 սմ, հատակի տրամագիծը՝ 70 սմ, բարձրությունը՝ 80 սմ), ուներ նախքան թրծելն արված պայտաձև ակ (բարձրությունը՝ 9 սմ, լայնությունը՝ 7 սմ, նկ. 5)։ Նմանօրինակ թոնիր առաջին անգամ է հանդիպում և սա ամենահին ակով թոնիրն է Հայաստանում։ Ակը կարգավորում է օգի մատակարարումը, որը և նպաստում է ավելի լավ այրվելուն։ Ակով թոնիրները հետագայում լայն տարածում ստացան։ Նույն եղանակով պատրաստված թոնիրներ են հայտնաբերվել նաև Արմավիր քաղաքի ագարակում[4] (պահպանված մասի

---

2 Ф. Н. Тер-Мартиросов, Античные печи из раскопок Арташата (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1975, № 7, էջ 70—72, նկ. 3)։

3 Ժ. Դ. Խաչատրյան, Ա. Գ. Կանեցյան, նշվ. աշխ., էջ 79։

4 Հ. Մարտիրոսյանի պեղումներից (նյութերը չեն տպագրված)։

բարձրությունը՝ 30 սմ, տրամագիծը՝ 50 և 55 սմ): Այստեղ ևս մեկն ավերվելուց հետո վրան կառուցել են երկրորդը։

VII բլրի թոնրի ակ ունենալու հանգամանքը պարզել հնարավոր չեղավ, քանի որ նրա մի կողմն ավերված էր։ Թոնրի կարասի բեկորներն ունեն անտիկ շրջանին բնորոշ պսակ և ակոսավոր, եղևնաձև զարդերով հարդարված տուուցիկ գոտի։

Նկ. 3

8 Ա քառակուսում բացված կոպիտ քարերով շարված պայտաձև օջախը լիքն էր մոխրով։ Օջախը պատի մոտ էր մակերեսից 1 մ խորության վրա։ Կավից պատրաստված պայտաձև օջախներ բացվել են VIII բլրի վրա[5] և Արմավիրի վերոհիշյալ ագարակում (լայնությունը 35 սմ): Ամրության համար երկուսի կողքերին էլ քարից պատեր են շարված։ Հիշյալ թոնիրներն ու օջախները կենցաղային նշանակություն ունեն։

Հետաքրքրական է խեցեգործության մասին վկայող կարմիր տուֆից պատրաստված դուրգի կոնաձև անիվը (տրամագիծը՝ 23 սմ, բարձրությունը՝ 10 սմ), որն առաջին անգամն է հանդիպում Հայաստանի անտիկ շրջանի

5 Ф. И. Тер-Мартиросов, նշվ. աշխ., էջ 70, նկ. 1։

հուշարձաններում (տախտ. I 1)։ Անիվը գտնվել է I շինարարական շրջանին վերաբերող քարե լիցքի մեջ։ Այն ձեռքի անիվ է, նեղ մասում ունի փայտի վրա հագցնելու համար կոնաձև ակոս, վերին՝ սեղանի հարթ մասը քիչ ավելի փոքր է ընդհանուր տրամագծից։ Դուրգի անիվները սովորաբար լինում են փայտից և կավից։ Հայաստանում կավե դուրգի անիվներ հայտնաբերվել են Կարմիր բլուրի հին բնակավայրից և միջնաբերդից (տրամագիծը՝ 30 սմ, հաստությունը՝ 5 սմ), որը ոտքի մասում կոնաձև ակոս ունի[6]։ Կոնաձև անցքը վկայում է, որ այն ոչ թե ամրացվել[7], այլ պտտվել է անշարժ առանցքի շուրջը։ Դուրգի անիվներ գտնվել են նաև Լճաշենից, Արգիշտիխինիլիից (3 սկավառակ), Էրեբունիից[8]։

Նկ. 4

Արտաշատի դուրգը շատ նման է Դվինի[9] կենտրոնական թաղամասից գտնված կավե դուրգերին (մ. թ. VIII—IX դդ.) միայն այն տարբերությամբ, որ վերջիններիս ոտքերն ավելի երկար են (տրամագիծը՝ 23 սմ, սկավառակի հաստությունը՝ 5 սմ, տրամագիծը՝ 26 սմ, բարձրությունը՝ 18,5 սմ)։

Կավագործությունը հանդես է եկել մարդկային հասարակության զարգացման վաղ ժամանակաշրջանում, սակայն դուրգի ձեռքի անիվը գործածության մեջ է մտել մ. թ. ա. III հազարամյակից։ Այն անցել է զարգացման

---

6 В. С. Сорокин, Раскопки древнего поселения (см. Б. Б. Пиотровский, Кармир-блур, т. II, Ереван, 1952, стр. 79—86, рис. 46).

7 Օ. Ս. Խնկիկյան, Արհեստները բրոնզեդարյան Հայաստանում («Հայաստանի հնագիտական հուշարձանները», № 9, Երևան, 1977, էջ 60)։

8 Նույն տեղում։

9 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, նկ. 219, Ա. Ա. Քալանթարյան, Դվինի նյութական մշակույթը IV—VIII դդ. («Հայաստանի հնագիտական հուշարձանները», № 5, Երևան, 1970, աղ. XXXI 2—7)։

երկարատև պրոցես, երբ մ. թ. ա. I հազարամյակի կեսերին երևան եկավ ոտքի ողնությամբ ավելի արագ պտտվող դուրգի անիվը[10]։ Բրոնզեդարյան խնցեղենի քննությունը ցույց է տալիս, որ Հայաստանում նույնպես մ. թ. ա. III հազարամյակում կիրառվել է ձեռքի դուրգ[11]։ Հետագայում, մինչև ուշ միջնադար, այն դուրս չի եկել գործածությունից և օգտագործվել է ոտքի դուրգի հետ համատեղ։ VII բլրի դուրգի զանգվածայնությունը խոսում է նրա կատարելագործված լինելու մասին։ Այդօրինակ դուրգերն ավելի արագ ու երկար են պտտվում։

Նկ. 5

Կավագործության հետ է կապված նաև բազալտե, շրջանաձև, տափակ կոկիչը (տախտ. I 4), ինչպես նաև համրիչի նման թեշիկի գլուխները (տրամագիծը՝ 4—5 սմ), որոնք թրծված չեն (մոտ 150 հատ, տախտ. I 13)։ Խոշորահատիկ կավից թուխ միջուկով, վատ թրծված երկարավուն իրը (պահպանված մասի երկարությունը՝ 10 սմ, բարձրությունը՝ 5,5 սմ, լայնությունը՝ 6,5 սմ), հավանաբար, կաղապարի մաս է (տախտ. I 14), որի եզրերին 7 մմ լայնությամբ առվակներ կան։ Մակերեսը պատած է դեղնականաչավուն անգոբով, փայլեցված չէ։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում դարշնագույն, սև ավազախառնուրդով կավից պատրաստված, լավ թրծված ձձումի կանթը, որի հիմքի մոտ կա ռելիեֆ եղրերով անցք (տախտ. I 12)։ Անտիկ շրջանի ձձումի բեկորներ հայտնաբերվել են Արտաշատի I և VIII բլուրներից, որոնք թվագրվում են

---

10 А. А. Бобринский, К изучению гончарного круга на территории СССР («Советская археология», 1961, № 2, стр. 32—34); Э. В. Сайко, К истории гончарного круга и развития форм керамики, Душанбе, 1971, стр. 33—44.

11 Հ. Ս. Ենկիկյան, նշվ. աշխ., էջ 58։

մ. թ. ա. II—մ. թ. II դդ., Արմավիրից, Օշականից[12], Գառնիից[13]։ Ձձումները Հայաստանում և Անդրկովկասում հանդիպում են սկսած երկաթի[14] շրջանից և լայնորեն տարածվում են հետագայում։ Վաղ շրջանի ձձումներ հայտնաբերվել են Կարմիր բլուրի քաղաքային թաղամասից, միջնաբերդից, Գոլովինոյից[15], Երևանի բուսաբանական այգու տարածքից[16], Լենինականից[17] և այլ վայրերից։ Դրանք ձևերով գրեթե իրարից չեն տարբերվում, միայն Կարմիր բլուրի միջնաբերդից գտնվածը ներսից ելուստներ ունի։ Հելլենիստական շրջանի ձձումները նույնպես փոփոխություններ չեն կրել, այլ միայն իրենց պսակների ձևերով նմանվել են նույն ժամանակաշրջանի խեցեղենին։

I շինարարական շրջանի շերտից հայտնաբերված ուշագրավ նյութերի թվին է պատկանում կրաքարե, մի կողմը մյուսից լայն (4,3×3,4 սմ) տափակ իրը (երկարությունը՝ 8 սմ), որի լայն մասում կան երկու խուլ անցքեր (խորությունը՝ 1,1 սմ, տախտ. I 6)։ Կրաքարե նման մի իր գտնվել է Գառնիի մ. թ. ա. II—I դդ. դամբարանից. միայն վերջինս ունի զիգզագաձև ու եռանկյունաձև փորագիր զարդեր[18]։ Հավանաբար, այդ իրերը եղել են թալիսմաններ և ունեն պաշտամունքային նշանակություն։ Նորաշենի վաղ հայկական ամրոցից (մ. թ. ա. VI—V դդ.) գտնված կանաչավուն, փորագիր, ծառանման և ցանցաձև զարդերով քարե առարկան համարվում է կավանոթները հարդարելու դրոշմ[19]։ Սակայն, Նորաշենի ամրոցի խեցեղենը հարդարված է փորագիր ու ակոսավոր զարդերով և շատ հնարավոր է, որ այնտեղից գտնված քառանկյուն, տափակ իրը նույնպես, վերոհիշյալների նման, պաշտամունքային նշանակություն ունենա։

I շինարարական շրջանի շերտից է հայտնաբերվել նաև մարմարե անոթի բեկոր, որի ներսի մասում նկատվում են շրջանաձև փորվածքի հետքեր։ Ուշագրավ է, որ VII բլրի այս շերտում երկաթյա զենքերն ու գործիքները սակավ են։ Հայտնաբերվել են երկաթյա մկրատների երկու կես՝ մեկը փոքր, մյուսը՝ մեծ (տախտ. I 2, 3)։ Վերջիններս, հավանաբար, ծառայել են ոչխար խուզելու համար։ Հայաստանում անտիկ շրջանի մկրատներ են գտնվել Ար-

---

12 С. Есаян, А. Калантарян, Античный некрополь Ошакана (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1976, № 12, стр. 30, табл. II_9).

13 А. А. Мартиросян, О древнем поселении и могильнике близ Ленинакана («Краткие сообщения Института истории материальной культуры», вып. 55, 1954, стр. 110).

14 Т. С. Хачатрян, Древняя культура Ширака III—I тыс. до н. э., Ереван, 1975, стр. 239, рис. 152.

15 А. А. Мартиросян, Раскопки в Головино, Ереван, 1954, стр. 63—64, 89—90, табл. XIX; նույնի, Город Тейшебаини, Ереван, 1961, стр. 118, рис. 30.

16 «Каталог археологических предметов Музея истории города Еревана», II, 1967, табл. XXVIII_1.

17 А. А. Мартиросян, О древнем поселении и могильнике близ Ленинакана, стр. 109, 110, рис. 44_1.

18 Б. Н. Аракелян, Гарни, II, Результаты раскопок 1951—1955 гг., Ереван, 1957, рис. 12б, первый с левой стороны; Ж. Д. Хачатрян, Гарни, V, Античный некрополь (результаты раскопок 1956—72 гг.), Ереван, 1976, стр. 93, рис. 33_{11}.

19 Ի. Կարապետյան, Նորաշենի վաղ հայկական ամրոցը («Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 2, էջ 290, տախտ. IV 4)։



Տախտակ I

տաշատի և Աշվանի[20] (Արևմտյան Հայաստան) դամբարաններից, Գառնիից[21]։ Մկրատները լայնորեն տարածված են եղել անտիկ աշխարհում և հայտնա-

[20] David H. French, Aşvan Excavations, 1969, Keban Project 1969 Activities, Ankara, 1971, pl. 30_2.

[21] «Гарни», V, стр. 102, рис. 33_3.



Տախտակ II

բերվել են շատ հնավայրերից։ Վրաստանում[22] (մ. թ. II—III դդ.), Ադրբեջանում[23], Մինդեշաուրի կարասային թաղումներից, Հյուսիսային Իրանում[24]

---

[22] О. С. Гамбашидзе, Бичвинта (итоги раскопок 1958 г. на VII участке археологической экспедиции) (Материалы по археологии Грузии и Кавказа», IV, Тбилиси, 1965, стр. 124, табл. I_4).

[23] С. М. Казиев, Альбом кувшинных погребений, Баку, 1960, стр. 25, табл. XXXVI, рис. 3.

[24] Toshihiko Sono and Shinji Fukai, Dailaman, III, Tokyo, 1968, p. 62, pl. XLII_{10}, XXXVI_9.

(մ. թ. I—II դդ.), Տանախսում[25] (III դ.) գտնված մկրատները ճիշտ նույնն են ինչ որ Արտաշատի № 15 դամբարանի և Գառնիի մկրատները։ Մկրատներն օգտագործվել են տարբեր նպատակներով՝ կենցաղում և բժշկության մեջ։

VII բլրում գտնված դանակի երկար շեղբը (տախտ. I_7) և երկթև, միջնաջիգով նետասլաքը (տախտ. I_{10}) վերաբերում են մ. թ. ա. II—I դդ. շերտերին, իսկ տեգի ծայրը՝ մ. թ. I—II դդ. շերտերին։ Նման դանակներ հայտնի են Գառնիից[26], Օշականից, Ենոքավանից[27], Մինգեչաուրից[28] և այլ վայրերից։

Տեգի ծայրը կտրվածքում օվալաձև է (պոչը թերի). ըստ երևույթին պոչը եղել է սուր և մտել է փայտի մեջ (տախտ. I_8)։ Նման տեգի ծայրեր շատ են հայտնաբերվել Արտաշատի I և VIII բլուրների պեղումներից։

Նետասլաքը երկթևանի է, տերևաձև, միջնաջիղով, ինչպիսիք հարյուրներով գտնվել են Արտաշատի I և VIII բլուրների մ. թ. ա. II—մ. թ. II դդ. շերտերից, Արմավիրից[29] (հելլենիստական շրջանի)։ Տերևաձև երկաթյա նետասլաքները հանդես են եկել մ. թ. ա. VIII—VII դդ. և շարունակվել մինչև հռոմեական շրջանը[30], իսկ Հայաստանում՝ մինչև միջնադար[31] (Դվին)։

VII բլրից նույնպես, ինչպես և մյուս բլուրներից, հայտնաբերվել են օձաքարե սկահակի բեկորներ։ Հետաքրքիր է, որ սկահակի մի բեկոր գտնվել է մ. թ. I—II դդ. շերտերից։ Այն լավ մշակված և փայլեցված, մուգ մոխրագույն-կանաչավուն քարից է, պսակը հորիզոնական, դրսից քիչ կլորավուն, ներսից՝ ուղղահայաց իջնող պատերով։ Մ. թ. I դ. շերտից քարե սկահակի բեկոր առաջին անգամն է հայտնաբերվում։ Այն, ըստ երևույթին, հելլենիստական շրջանի է։ Գառնիի, Արտաշատի և Արմավիրի պեղումները վկայում են, որ քարե սկահակները հանդես են գալիս վաղ հայկական շրջանում, բայց լայն տարածում են ստանում մ. թ. ա. III—I դդ., որից հետո դրանք այլևս չեն հանդիպում[32]։

Մեծ խումբ են կազմում VII բլրի երկրորդ շերտից և մակերեսից հայտնաբերված կավե արձանիկները։ Առավել ուշագրավ են երեխան գրկին բազկաթոռին նստած կնոջ արձանիկները, որոնց ընդհանուր պատկերն ամփոփված է սյուների և դրանցից վեր խոյացող կամարի շրջանակի մեջ։ Պահպանվել է արձանիկներից մեկի կրծքամասը, խոյակը և երեխան, որը բավական նուրբ և հստակ է մշակված։ Այս արձանիկները, հավանաբար, պատկերում են Անահիտին։

---

25 Д. Б. Шелов, Нижне-Донская экспедиция в 1962—1963 гг. («Краткие сообщения Института археологии АН СССР», вып. 107, 1966, стр. 94, рис. 34_7).

26 «Гарни», II, стр. 46, табл. 12 а, б.

27 С. Есаян, А. Калантарян, *նշվ. աշխ., էջ 34*, табл. IV_1.

28 И. Г. Нариманов, Г. М. Асланов, Об одной группе погребальных памятников Мингечаура («Материальная культура Азербайджана», № 4, Баку, 1962, стр. 231).

29 Г. А. Тирацян, Древнеармянская керамика из раскопок Армавира (*«Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 1, էջ 226, տախտ. $IV_{4,5}$, V_7), նույնի, Արմավիրի պեղումները (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1974, № 12, էջ 66, նկ. 3 դ)*։

30 K. Doerner, Th. Goell, Arsamela am Nimphaios, Berlin, 1964, S. 277

31 *Ա. Ա. Քալանթարյան, նշվ. աշխ., տախտ. XIX_7*։

32 *Ժ. Դ. Խաչատրյան, Հնագիտական հայտնագործություններ Գեղադիրում (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1966, № 1, էջ 84)*։



Տախտակ III

VII բլրից հայտնաբերվել են մերկացող երկու կանանց, մահճի վրա նստած, ոտքերը ներքև կախած կնոջ[33], քնարահար կնոջ, հեծյալների արձանիկներ և դրանց պատվանդանները (տախտ. III 1—7)։ Վերջիններիս թվում կա մեկը, որը կիսակլոր է և ունի ռելիեֆ դեղնցիկ գոտիներ (տախտ. III 7)։ Նորություն է արձանիկներից մեկ ուրիշը, որի միայն ոտքերի մասն է պահպանվել։ Այն վերարտադրում է ամբողջ պատկերի շարժուն վիճակը։

33 Ժ. Դ. Խաչատրյան, Հայաստանի անտիկ շրջանի կորոպլաստիկան (նույն տեղում, 1977, № 5, էջ 37—59)։

Արձանիկի ոտքերը մշակված են չափազանց փափուկ և ընդգծված մեղմությամբ, որից կարելի է ենթադրել, որ դրանք պատկանում են մանկան։ Ոտքերի դիրքը, հանդարտ բնութագիրը, թույլ են տալիս եզրակացնելու, որ այստեղ պատկերված է էրոսը (տախտ. III 6)։

Ուշագրավ է նաև մեծ արձանիկի բևկորը, որի վրա պահպանվել է պատվանդանին կանգնած կնոջ հագուստի ծալքերի ցածի մասը (տախտ. III 2)։ Նշմարվում է լայն պատվանդանի վրա կանգնած կնոջ ձախ ոտքի ծայրը։ Շքեղ հագուստի փեշերը գեղեցիկ մշակված ծալքերով փռվել են հատակին, որը և վկայում է կնոջ հասարակ մահկանացու չլինելու հանգամանքը։ Հագուստի շքեղությունը, ծալքերի մշակվածությունը և հատակին փռված տեսքը նման է Արտաշատի I բլրից գտնված Աֆրոդիտեի մարմարե արձանին[34]։ Հնարավոր է, որ սա ևս պատկերում է Աֆրոդիտեին։

Արձանիկները, փոքրասիական և մերձավորարևելյան կենտրոնների կավե արձանիկների հետ ունեցած իրենց ընդհանրություններով հանդերձ, շատ ինքնատիպ են և աչքի են ընկնում իրենց տեղական առանձնահատկություններով։ Վերոհիշյալ բոլոր արձանիկները թվագրվում են մ. թ. I—II դդ.։

Ուշադրության արժանի է VII բլրի արևելյան լանջին, պարսպի մոտ գտնված բրոնզե արծվաքանդակը։ Արծիվը կանգնած է բազմաստիճան բրգաձև պատվանդանի վրա դրված եղնիկի գլխին։ Ճիշտ նման մի բրոնզե արծվաքանդակ գտնվել է VII և IX բլուրների միջև եղած քարհանքի տարածքից, միայն այն տարբերությամբ, որ այստեղ արծիվը կանգնած է ուղղակի պատվանդանի վրա։ Երկու արծվաքանդակներն էլ ունեն միևնույն հորինվածքը և պաշտամունքային բնույթի են։ VII բլրի արծվաքանդակի և եղնիկի գլխի զուգորդության մեջ մասնագետները տեսնում են արևի ու լուսնի խորհրդանիշը[35]։ Արծվաքանդակները կատարված են բավական կոպիտ, խախտված են համաչափությունները և ընդհանրացված մշակում ունեն։

Հայաստանից գտնված՝ գլխին արծիվ կանգնած եղնիկի մի արձանիկ պահվում է Լուվրի թանգարանում[36]։ Այստեղ, ի տարբերություն նախորդների, բրգաձև պատվանդանը փոխարինված է եղջերվի քանդակով։ Արծիվն անհամեմատ ավելի լավ է մշակված, իսկ եղնիկը՝ կոպիտ։ Այդպիսի կոպիտ մշակված եղնիկի բրոնզե մի արձանիկ հայտնաբերվել է Սիսիանի իշխանական դամբարանից։

Հայտնի է, որ արծիվը անցյալում հանդիսացել է երկնքի և արևի աստվածության խորհրդանիշ[37]։ Արևի աստվածության հետ կապված արծվի պատկերով մեդալիոններ են գտնվել Սիսիանի դամբարանից[38]։ Արտաշատի արծիվները հիշեցնում են Ծոփքի թագավոր Արդիսարի դրամի հակառակ երեսին պատկերված արծվին, որն Արամազդ-Զևսի խորհրդանշանն[39] է և նմանվում է

---

34 Б. Н. Аракелян, Очерки по истории искусства древней Армении, Ереван, 1976, табл. XXII.

35 Նույն տեղում, էջ 79, տախտ. XCIII—XCIV:

36 Նույն տեղում, տախտ. XCV:

37 К. В. Тревер, Новые сасанидские блюда Эрмитажа. Л.—М., 1937, стр. 17 и др.

38 Б. Н. Аракелян, նշվ. աշխ., էջ 81—82. տախտ. XVII—XVIII 1, 2, Ժ. Խաչատրյան, Հայաստանի անտիկ շրջանի մեդալիոնները (մ. թ. ա. II—մ. թ. I դդ.), ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1978, № 5, էջ 46—56։

39 Նույն տեղում, էջ 61, տախտ. LXVIII:



Տախտակ IV

Հելլենիստական երկրների թագավորների դրամների արծիվներին։ Արծվի բրոնզյա քանդակներ են գտնվել Կապադովկիայից և այլ վայրերից[40], *որոնք նույնպես կապված են արևի պաշտամունքի հետ։*

[40] G. M. A. Richter, Catalogue of Greek Antiquities Dumbarton oaks collecton, Cambridge, 1956, pl. XVIII F, № 21.


M 1:500/1.0 м
Սխեմա N 1

Արտաշատի արծվաքանդակները նման են հին Նիսայից հայտնաբերված մ. թ. ա. II—I դդ. թվագրվող արծաթյա ոսկեջրած արծվաքանդակին[41]։ Վերջինս կանգնած է ցածր պատվանդանի վրա։ Արտաշատի արծվաքանդակները պատրաստված են տեղում և թվագրվում են մ. թ. ա. II—I դդ.։

VII բլրի հարավային լանջից գտնված թռչնաքանդակի միայն մարմինն է պահպանվել (առանց վերջույթների)։ Այն պատրաստված է կրաքարից (տախտ. III 8)։ Պարզորոշ ընդգծված են թևերը, որոնք զբաղեցնում են ծավալի կողմնային մասերի ամբողջական հատվածները։ Թևերի վրա պայմանականորեն արված են փորագիր զիգզագաձև և եռանկյունաձև գծեր։ Զգացվում է, որ այն ունեցել է բավական խրոխտ կեցվածք, հենվել է մարմնի ստորին մասում դրված, զանգվածային պատվանդանի և ոտքերի վրա։ Ծավալի հոյակապ զգացումով, հիանալիորեն մշակված է թռչունի կրծքի մասը։ Կարելի է ենթադրել, որ այն արծվի է։ Հետևաբար, այստեղ մենք ունենք վերոհիշյալ բրոնզյա արծվաքանդակների նման մի արձանիկ, որը թվագրվում է մ. թ. ա. II—I դդ.։

Համեմատաբար քիչ, բայց VII բլրից հայտնաբերվել են նաև ապակյա անոթների բեկորներ։ Դրանցից երկուսը թասերի պսակների մասեր են, մեկը՝ փոքրիկ սրվակի։ Թասերից մեկը գտնվել է կենտրոնական հատվածից, մ. թ. ա. II—I դդ. շերտերից։ Այն կապտականաչավուն, անթափանցիկ, ցածրորակ, պղպջակոտ ապակուց է։ Պատրաստված է կաղապարի վրա՝ փաթաթելու, սեղմելու եղանակով։ Թասի ներսը հարթ է, անփայլ, դուրսը՝ անհարթ և փայլուն։ Երկրորդը կապտավուն է, անթափանցիկ, համեմատաբար բարձրորակ, առանց պղպջակների ապակուց։ Պատրաստված է նույն եղանակով (տախտ. II 6, 7)։ Այս թասերը տեղական[42] արտադրանքի նմուշներ են, որոնք հանդիպում են քաղաքի ամբողջ տարածքում և առայժմ հայտնի են միայն Արտաշատից։ Դրանք ընդհանրապես հայտնաբերվում են առաջին շինարարական շրջանի շերտերից (մ. թ. ա. II—մ. թ. I դդ. կեսեր)։

Փոքրիկ սրվակի բեկորը նման է այսպես կոչված արմավենու պտղի, պատրաստված է դեղնավուն ապակուց՝ կաղապարի մեջ փչելու եղանակով (տախտ. II 5)։ Սա Հայաստանից մեզ հայտնի չորրորդ սրվակն է։ Նմանօրինակ սրվակներ գտնվել են Սևանի ավազանից, Գառնիի դամբարանից, որոնք թվագրվում են մ. թ. II դարով[43]։ Արմավենու պտղի՝ նման սրվակները անտիկ ապակու տարածված տեսակներից են և հայտնաբերվել են սկսած Իտալիայից մինչև Միջագետք, Պաղեստինից մինչև մերձգնեպրյան շրջանները[44]։ Դրանք ունեն ձվաձև իրան, կնճռոտ մակերես և կարճ վիզ։ Արտագրության վայրը համարվում է Սիրիան, իսկ ժամանակը՝ մ. թ. ա. I դ. կեսերից մինչև

---

41 Г. А. Кошеленко, Родина парфян, М., 1977, рис. 63.

42 Ж. Д. Хачатрян, Стеклоделие в древней Армении (II—I века до н. э.), («Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 1, էջ 256—257, տախտակ II 2, 3, 5—13)։

43 Բ. Ն. Առաքելյան, Գ. Ա. Տիրացյան, Ժ. Դ. Խաչատրյան, Հին Հայաստանի ապակին («Հայաստանի հնագիտական հուշարձանները», № 3, Երևան, 1969, №№ 127, 129)։

44 Н. З. Куинна, Сирийские выдутые в форме стеклянные сосуды из некрополя Пантикапея («Памятники античного прикладного искусства», Л., 1973, стр. 128—130, рис. 31 1—4.

մ. թ. II դ.[45]։ Ըստ երևույթին Հայաստանի օրինակները պետք է թվագրել մ. թ. I—II դդ.։ Արտաշատի սրվակի բեկորը գտնվել է շինարարական երկրորդ շերտից, որը թվագրվում է մ. թ. I դ. կեսերից—մ. թ. II դ. 70-ական թվականներով։

VII բլրի պեղումների արդյունքներից են հարավային լանջի՝ մ. թ. ա. V—IV հազարամյակի բնակավայրի հետքերը։ Կենտրոնական հատվածից դեպի հարավ, պարսպի ներսի մասում հայտնաբերվեցին ուռուցիկ, քիչ շեղանկյունաձև իրանով յոթ կարասներ (տախտ. IV 1)։ Դրանք թաղված էին 70 սմ հաստությամբ մոխրաշերտի մեջ, որտեղից դուրս եկան խորը թասեր, սյուլիկներ (տախտ. IV 2—4), ոսկրի լավ մշակված դաշույնանման շեղբ (տախտ. II 1)։ Կարասներից յուրաքանչյուրի մեջ կար մի փոքր կճուճ, ոսկրե հերյուններ (տախտ. II 2), օբսիդիանե գործիքներ (տախտ. II 2, 3), խարամ և այլն։ Խեցեղենը պատրաստված է ձեռքով, խոշորահատիկ կավից և վատ է թրծված։ Մ. թ. ա. V—IV հազարամյակի նույնպիսի շերտ բացվեց նաև հարավ-արևելյան լանջում, անտիկ շենքի մեջ։ Այստեղ ևս մոխրաշերտի միջից ի հայտ եկան օբսիդիանե շեղբ, և մեծ թվով խեցեղեն անոթների բեկորներ։

VII բլրի նյութերի մեջ հիմնականը խեցեղենն է, որոնցից առաջին շինարարական շրջանին վերաբերող շերտերից հայտնաբերվածները բնորոշ են մ. թ. ա. II—I դդ.։ Դրանցից հատկապես ուշագրավ են երկրաչափական, բուսական և կենդանական հարուստ զարդաձևերով հարդարված տափաշշերը, միկանթանի ծորակավոր անոթները, փիալաները, կիսագնդաձև թասերը, ափսեները, որոնցից շատերն առաջին անգամն են հանդիպում։

Երկրորդ շինարարական շրջանի խեցեղենը հիմնականում պատրաստված է դուրգի վրա։ Այն իր մշակմամբ, հարդարանքով ու ձևերով որոշակիորեն տարբերվում է նախորդ շրջանի խեցեղենից։ Հաճախ հանդիպող ձևերից են ձկան ափսեները, բաժակները, թասերը, սկուտեղները, ջրամանները, ափսեները և այլն։

Գտնվել են նաև ներմուծված խեցեղենի, ջնարակած տափաշշի (մ. թ. ա. I դ.) արիբալոսի, ամֆորաների և այլ անոթների բեկորներ։

Այսպիսով, VII բլրի պեղումները ցույց են տալիս, որ թեև այն Արտաշատի բլուրների շարքում իր բարձրությամբ երկրորդն է և լավ պաշտպանված, սակայն, VIII բլրի նման եղել է արհեստավորական թաղամաս։ Ըստ երևույթին այստեղ ապրել են արհեստավորներ ու նրանց հետ կապված միջին դասի քաղաքացիներ։ Չպետք է մոռանալ, սակայն, զինվորականությանը, որովհետև VII բլուրը ևս I բլրի նման, իր դիրքով, ուներ շատ կարևոր մի ֆունկցիա։ Դա I, III, IV և V բլուրների հետ միասին II և VI բլուրների պաշտպանությունն ապահովելն էր։

---

45 Նույն տեղում· Axel von Saldern, Birgit Nolte, Peter La Baume Thea Elisabeth Haevernick, Glaser der Antike Sammluug Erwin Oppenländer, Köln, 1975, №№ 476, 477; Peter La Baume, Glas der antiken welt, I, Köln, Tafel 45 h 6.

РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК VII АРТАШАТСКОГО ХОЛМА В 1973—1975 гг.

ЖОРЕС ХАЧАТРЯН

Резюме

В 1973 г. отрядом арташатской археологической экспедиции были начаты раскопки VII арташатского холма. VII арташатский холм скалистый и имеет пологий рельеф, поэтому культурные слои плохо сохранились. В результате раскопок были выявлены остатки оборонительной системы жилых домов, тондир, гончарный круг, терракоты, стекло и т. д. Весь материал и архитектурные остатки относятся к двум строительным периодам. Первый строительный период датируется II—I вв. до н. э., а второй—I—II вв. н. э. VII арташатский холм играл важную роль в защите II и VI холмов.